

Այս հնաժայրը տակաւին ամբողջապէս փոքրած չը լինելով՝ առայժմ համառօտիւ կանցնինք, խոստանալով ուրիշ անգամ աւելի մանրամասն տեղեկութիւններ հաղորդել մեր ընթերցողներուն:

(Սիսն)

ԳԻՇԵՐՕԹԻՎ ՎԱՐԺԱՐԱՆՔ

Ամեն ձեռնարկութիւն՝ նիւթական կամ բարոյական շահ մ'իրան շարժառիթ ունի: Պատիւ, փառք, բարի համբաւ կամ նիւթական օգուտ: Առանց այս շարժառիթներուն ոչ ոք գործի մը կը ձեռնարկէ:

Կան մարդիկ որք բարոյական շահը նիւթականէն աւելի կը յարգեն: Բայց ասոնք բացառութիւն են: Ընդհանրապէս նիւթական շահը բարոյականէն աւելի հրապոյր, աւելի ազդեցութիւն ունի մարդոց բնութեան վրայ: Ուստի և առաւել հզօր շարժառիթ մ'է մարդկային ձեռնարկութեանց:

Ըստ մէջ՝ բարի օգտակար և միշտ ապահով է այն ձեռնարկութիւնը, որոյ մէջ նիւթական շահ բարոյականին հետ կը լծորդի և այս երկու շարժառիթք ի միասին կը գործեն:

Այս նկատմամբ կը գովենք ազգայնոց ոմանց այս օրերս զիշերօթիկ վարժարաններ բանալու ձեռնարկութիւնը: Ս. Փանոսեան էֆէնտի, և Օրիորդ Սինեմ՝ Օսկանեան, շահու և միանգամայն պատուոյ շարժառիթներէ զրդեալ, մէկը մանչ տղայոց՝ միւսն ալ աղջկանց զիշերօթիկ վարժարաններ բանալու ձեռնարկած են:

Առաջին արգէն Ազապեան վարժարանի երկամեայ տնօրէնութեան և մատակարարութեամբ բաւականին փորձառութիւն ստացած լինելով, եթէ իր լրացած յայտարարութեան համեմատ, զոր լրագրոյս վերջին երեք զրած ենք, յաջողի իր այս նոր ձեռնարկութիւնը յառաջ տանիլ, աղջկն կարեւոր ծառայութիւն մը մատուցանելէ զատ, ինչպէս ինքն ալ կ'օտէ, փառք և ստակ ալ կը շահի:

Ներդրողը: Օրիորդ Սինեմ Օսկանեան, Անգղիական վարժարանի մէջ կրթութիւն առած, Հայերէն և Անգղիերէն լեզուաց հմուտ, եօթն տարի վարժուհիութիւն րրած է ալ և ալ վարժարանաց մէջ, ղլխաւորապէս ի Տրապիզոն, ուր 3 տարի շարունակ կ'իցած և 300 էն աւելի մանկունք յաստիարակած է: Այս հանգամանքներն և իր վկայեալ համեստութիւնն ու բարեկրթութիւնը բաւական են կատարեալ վստահութիւն ազդելու Հայ ծնողաց:

Ասոր ալ յայտարարութիւնը լրագրոյս վերջին երեսը կը տեսնեն ընթերցողք:

Նշանակութեան արժանի է Օրիորդին յայտարարութեան այն մասը, ուր կը ծանուցանէ թէ սովորական ուսմունքներէ զատ՝ նաև առանին տնտեսութիւն պիտի ուսուցանէ, որ զաստիարակութեան ամենակարեւոր մասն է ապագայ տանտիկնաց համար:

Մեր կողմէ յաջողութիւն մաղթելով այս ձեռնարկութեանց, կը յուսանք և մանաւանդ կը փափաքինք որ նմանօրինակ ձեռնարկութեանց քաջալեր լինին ազգին մէջ: Ուրիշ ձեռնհաս և հրմուտ անձինք ալ առանձնաբար կամ ընկերութեամբ ուրիշ վարժարաններ բանան, և մէջերնին մրցում մտնէ, որպէս զի իրար գերազանցելու փութով զաստիարակութեան ամենակարեւոր զիտութիւնը զարգացնեն ազգին մէջ:

Խոսիս Թ. 1449 յուլ. 29

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԳԻ

Ի 19 յուլիսի: — Որովհետեւ Յակոբ վարդապետն Տ. Աւետիքեան որպէս երեւի սնոտի պատճառաբերութեամբ ոչ յօժարելով կատարել զհրամանս Ծայրագոյն Հոգեւոր Իշխանութեան զառաջինն վասն վանահայրական պաշտօնի ի վասն Ագուլեաց և զերկրորդն վասն կրօնուսուցչութեան և քարոզութեան յԱկեղեցիս Նոր-Բայազետու լինի օրինակ անհնազանդութեան այլոց միաբանից Աթոռոյս և ընդդիմութեան տնօրէնութեան Հոգեւոր Ծայրագոյն Իշխանութեանն, ուստի և ըստ հաճութեան Վեհափառ Սթոյնիկոսի ամենայն Հայոց Սինօդոս ենթադատէ յԱտենի Սինօդիս վերառեալ զվեղար նորա թողուլ ի կարգի քահանայութեան և հանեալ զնա ի վանիցս թոյլ տալ բնակիլ անդ, ուր ձեռնադրեալն է ի քահանայութիւն, այնու զի եթէ ժողովրդականք տեղւոյն կամիցին ընդունել զնա իբրեւ քահանայ: